



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material







# ՀԱՄԱՐԱՏՈՒՌԻԹԻՒՆ

## ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

## ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

### Ա. Զ. Գ. Ա. ՅԻՆ ԺՈՂՈՎԱՆ



Խիտրոն ձևով հանձնարված է  
1874 ստուտգո թ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՅԵԱՆ

UNIVERSITY OF CALIFORNIA LIBRARY

PHYSICS DEPARTMENT


1875-1876

| No. | Name | Grade | Score |
|-----|------|-------|-------|
| 1   | ...  | ...   | ...   |
| 2   | ...  | ...   | ...   |
| 3   | ...  | ...   | ...   |
| 4   | ...  | ...   | ...   |
| 5   | ...  | ...   | ...   |
| 6   | ...  | ...   | ...   |
| 7   | ...  | ...   | ...   |
| 8   | ...  | ...   | ...   |
| 9   | ...  | ...   | ...   |
| 10  | ...  | ...   | ...   |
| 11  | ...  | ...   | ...   |
| 12  | ...  | ...   | ...   |
| 13  | ...  | ...   | ...   |
| 14  | ...  | ...   | ...   |
| 15  | ...  | ...   | ...   |
| 16  | ...  | ...   | ...   |
| 17  | ...  | ...   | ...   |
| 18  | ...  | ...   | ...   |
| 19  | ...  | ...   | ...   |
| 20  | ...  | ...   | ...   |
| 21  | ...  | ...   | ...   |
| 22  | ...  | ...   | ...   |
| 23  | ...  | ...   | ...   |
| 24  | ...  | ...   | ...   |
| 25  | ...  | ...   | ...   |
| 26  | ...  | ...   | ...   |
| 27  | ...  | ...   | ...   |
| 28  | ...  | ...   | ...   |
| 29  | ...  | ...   | ...   |
| 30  | ...  | ...   | ...   |
| 31  | ...  | ...   | ...   |
| 32  | ...  | ...   | ...   |
| 33  | ...  | ...   | ...   |
| 34  | ...  | ...   | ...   |
| 35  | ...  | ...   | ...   |
| 36  | ...  | ...   | ...   |
| 37  | ...  | ...   | ...   |
| 38  | ...  | ...   | ...   |
| 39  | ...  | ...   | ...   |
| 40  | ...  | ...   | ...   |
| 41  | ...  | ...   | ...   |
| 42  | ...  | ...   | ...   |
| 43  | ...  | ...   | ...   |
| 44  | ...  | ...   | ...   |
| 45  | ...  | ...   | ...   |
| 46  | ...  | ...   | ...   |
| 47  | ...  | ...   | ...   |
| 48  | ...  | ...   | ...   |
| 49  | ...  | ...   | ...   |
| 50  | ...  | ...   | ...   |

ԱՆԴԱՄՔ ԱԶԳԱՅԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

1872-1874 ԱՄԻ

|     |      |             |              |  |
|-----|------|-------------|--------------|--|
| 1.  | Գեր. | Տ. Թադեոս   | Արքեպիսկոպոս | Տրստոնի                                    |
| 2.  | «    | « Գրիգոր    | «            | Բաքերդի                                    |
| 3.  | «    | « Նիկողայոս | «            | Ահնայ, փախնանեալ ի Պատրիարքական Տեղապահան- |
| 4.  | Արժ. | « Գարեգին   | Վարդապետ     | Թեան ի 11 Փետրվարի 1874                    |
| 5.  | «    | « Խորեն     | «            | Միթարեան, հրաժարեալ ի 28 Յուլիսի 1872      |
| 6.  | «    | « Հմայեակ   | «            | Դիմարեան                                   |
| 7.  | «    | « Մամթեոս   | «            | Իզմիրեան                                   |
| 8.  | «    | « Գեորգ     | Քահանայ      | Արծրունի                                   |
| 9.  | «    | « Խաչատուր  | «            | Տ. Գաբրիելեան                              |
| 10. | «    | « Խորեն     | «            | Փեհլիսիանեան                               |
| 11. | «    | « Յարոնթիան | «            | Սերովբեան                                  |
| 12. | «    | « Յարոնթիան | «            | Պաշատոռ, հրաժարեալ ի 20 Մարտի 1872         |
| 13. | «    | « Յովհաննէս | «            | Մկրեան                                     |
| 14. | «    | « Սահակ     | «            | Տ. Սարգսեան                                |




# ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

## ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

1872-1874 ԱՄԻ

Ա Ռ

### Ա Չ Գ Ա Յ Ի Ն Ժ Ո Ղ Ո Վ Ն



Ա.

Կրօնական ժողովս Ազգային ժողովիդ ընտրութեամբն ու վստահութեամբը պատուեալ, 1872 մարտ ամսոյ 20 ին Ա. մենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր հրաւիրանացն համաձայն իւր առաջին նիստն ընելով՝ իր պաշտօնին ձեռնարկեց և մինչեւ 1874 յունիսի 27 շարունակեց թէպէտ և իւր սահմանադրական երկամեայ շրջանը 1874 ապրիլի 30 ին կը լրանար, այլ սակայն անհրաժեշտ հարկը պարտաւորեց շարունակել իր պաշտօնը մինչ ցընտրութիւն յաջորդ Կրօնական ժողովին:

Կրօնական ժողովս՝ որ 1866 էն ետքը ըստ օրինի կազմեալ և իւր նիստերը շարունակող առաջին Կրօնական ժողովն եղաւ, իւր վարչական պաշտօնի և պարտաւորութեանց մասին Ազգային Սահմանադրութիւնն իրեն ուղեցոյց ունենալով՝ գործեց իւր երկամեայ բովանդակ շրջանին մէջ, և թէպէտ կը փափաքէր լիաձեռն գործովք ներկայանալ Ազգային ժողովիդ, սակայն դժբաղդաբար թէ՛ միջոցները և թէ՛ Ազգային վարչութեան ծանուցեալ տագնապալից վիճակը չընէրեցին քան զայս աւելի գործել:

Եւ արդ՝ Կրօնական ժողովս իւր պար-

տաւորութեանց մասին, որ կը գծէ Սահմանադրութեան 28 դ յօդուածը, կը փութայ յայտարարել՝ թէ.

1. - Ազգին մէջ կրօնական զգացումը զարգացնելու համար ազգային վարժարանաց մէջ Քրիստոնէական վարդապետութիւն ուսուցանելու պէտքը նկատողութեան առաւ, և ինչպէս որ միեւնոյն յօդուածը կը տրամադրէ երբեմն երբեմն այցելութիւն ընել ազգային վարժարանաց, Կրօնական ժողովս իր առաջին այցելութեան միջոցին դժբաղդաբար տեսաւ որ վարժարանաց խիստ մեծագոյն մասին մէջ այս ուսման դասատուութիւնը չկար, ուստի Քրիստոնէական վարդապետութեան դասատուներն և դասագրքերը որոշելով, յատուկ շրջաբերականաւ ծանոյց սայրաքաղաքիս Թաղական խորհրդոց և Հոգաբարձութեանց, որք յատկացեալ դասատուներէն մէկը կամ միւսը որոշեցին և ծանուցին Կրօնական ժողովոյս:

Այսպէս սկսաւ այս կարեւոր ուսումը ընդհանրանալ ազգային վարժարանաց մէջ:

2. - Հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւններն անխախտ պահելը ոչ միայն իբրեւ

տահմանադրական պարտաւորութիւն այլ իբրեւ Եկեղեցական կոչման պարտաւորութիւն կատարած է :

3. - Եկեղեցեաց և Եկեղեցականաց բարեկարգութեան մասին երկիցս յատուկ մասնաժողով կարգեց, բայց վարչական վերահաս տագնապը և անկէ ետքը պատահած Տեղապահական և Պատրիարքական ընտրութեանց զբաղումներն միջոց չը տուին յանձնարարեալ ծրագիրը պատրաստելու :

4. - Եկեղեցականաց ներկայ վիճակը լաւ ցնելու և ապագայն անդորրելու և ապահովելու միջոցներու մասին՝ որն որ Սահմանադրութեան 35 դ յօդուածն ալ կը տրամադրէ, Կրօնական ժողովս չէր կրնար առանց Քաղական խորհրդոց գործակցութեանը ձեռնարկութիւն մ'ընել, ուստի արժան չդատեց այս խնդրոյն մէջ մտնել :

5. - Արժանաւոր և բանիբուն վարդապետներ և քահանաներ հասցնելու մասին Կրօնական ժողովս իր անմիջական տեսչութեան ներքեւ վարժարան չունի, և միւս ազգային վարժարաններն ալ Քաղական խորհրդոց անմիջական հոգաբարձութեան տակ ըլլալով՝ Կրօնական ժողովն կրօնական ուսմանց մասին վերատեսչութիւն միայն կրնայ ընել. բայց Կրօնական ժողովս փոյթ տարաւ այս մասին նախապատրաստութիւններ ընելու, և այս մեծ պիտոյքը ազգային Վանքերէն հոգալու համար՝ նախորդ Քաղաքական ժողովոյ գործակցութեամբ վանօրէից Հրահանգը պատրաստեց և գործադրութեան դրաւ զայն, ինչպէս կ'երեւի 72-73 ամի Խառն ժողովոյ հրատարակած համարատուութեան տեղեկագրէն :

6. - Ազգին մէջ կրօնական վէճ մը չը ծագեցաւ, որպէս զի անոր լուծմամբը զբաղած ըլլայ Կրօնական ժողովս բաց ի ամուսնական և այլ մասնաւոր կրօնական խնդիրներէ, որոց թիւը պիտի տեսնուի տեղեկագրիս վերջը : Ամուսնական քանի մը խնդիրներ թէեւ ի մասնաւորի նկա-

տողութեան առնուեցան, բայց ընդհանրապէս զանոնք նկատողութեան առնելու համար միջոցներ կը սակսէին և զանազան դժուարութիւններ կը տեսնուէին :

Կրօնական ժողովս իր առանձինն պարտաւորութեանց մասին այս հակիրճ տեսութիւնն առանդելէ ետքը, կ'անցնի իր առանձինն պաշտօնավարութեան երկամեայ համարատուութիւնը ներկայացնել Ազգային ժողովիդ, ծանուցանելով՝ թէ ինչպէս նախորդ Քաղաքական ժողովոյ գործակցութեամբը իր ունեցած պաշտօնավարութեան համարատուութիւնն արդէն մատուցած է, արդի Քաղաքական ժողովոյ գործակցութեամբը ունեցած ութամեայ պաշտօնավարութեան տեղեկագիրն ալ պիտի հաղորդէ Ազգային ժողովիդ :

Բ.

Կրօնական ժողովս մայրաքաղաքիս մէկ քանի եկեղեցեաց Քարողչաց և Աւագերիցանց ընտրութիւնները կատարեց, որք են .

1. - Գեր. Տ. Մամբրէ եպիսկոպոս Քարողիչ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Ղաւթիոյ .

2. - Արժ. Տ. Մատթէոս վարդապետ Իզմիրլեանց՝ Քարողիչ Ս. Կարապետ եկեղեցւոյն Իւսկիւտար Նոր-Թաղի :

3. - Արժ. Տ. Խօրէն վարդապետ Կիրոյեան՝ Քարողիչ Ս. Թագաւոր եկեղեցւոյն Քաղկեդոնի .

4. - Արժ. Տ. Ներսէս վարդապետ Ասլանեան՝ Քարողիչ Ս. Երորդութիւն եկեղեցւոյ Բերայի .

5. - Արժ. Տ. Պօղոս վարդապետ Խօլտամեան՝ Քարողիչ Ս. Յարութիւն եկեղեցւոյ Գում-Գափուի դրսի .

6. - Արժ. Տ. Յակոբ վարդապետ Փափաղեան՝ Քարողիչ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Միջագիւղի .

7. - Արժ. Տ. Ամբրոսիոս վարդապետ

Իսկէնտէրեան՝ Քարողիչ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն Ղալաթիոյ, ի տեղի Գեր. Տ. Մամբրէ եպիսկոպոսի որ վանահայրութեան պաշտօնիւ մեկնեցաւ ի Ս. Կարապետի վանս Մշոյ :

8. - Արժ. Տ. Փիլիպպոս վարդապետ՝ Քարողիչ Ս. Յարութիւն եկեղեցւոյ Գում-Գափուի դրսի, ի տեղի Արժ. Տ. Պողոս վարդապետի Խօլտամեան :

9. - Արժ. Տ. Իզնատիոս վարդապետ Շիշէճեան՝ Քարողիչ Ս. Յովհաննէս եկեղեցւոյ Նաւլը-Գափուի, ի տեղի Արժ. Տ. Կարապետ վարդապետի Փափաղեան, որ Առաջնորդական Տեղապահութեան պաշտօնիւ մեկնեցաւ յԵդեսիա .

10. - Արժ. Տ. Յարութիւն քահանայ Սերովբեան՝ Աւագերէց Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Ղալաթիոյ .

11. - Արժ. Տ. Խորէն քահանայ Փեհլիվանեան՝ Աւագերէց Ս. Կարապետ եկեղեցւոյ Իւսկիւտար Նոր-Թաղի, ի տեղի վախճանեալ Աւագ Տ. Պաղտասար քահանայի .

12. - Արժ. Տ. Յովհաննէս քահանայ՝ Աւագերէց Ս. Կարապետ եկեղեցւոյ Իւսկիւտար Նոր-Թաղի, նորընտիր Աւագերէց Արժ. Տ. Խորէն քահանայ Փեհլիվանեանի հրաժարականին վրայ :

Գ.

Կրօնական ժողովս՝ ըստ օրինի քննութիւններն կատարելով և Սահմանադրութեան 32 դ յօդուածին համաձայն հինգ վարդապետաց և երեսուն երեք քահանայից, որոց տասնեւութը մայրաքաղաքիս եկեղեցեաց և տասնեւհինգը այլ և այլ գաւառաց կը վերաբերին, ձեռնադրութեան հրամանը տուած է, որք են

1. - Մելքոն սարկաւազ Յովակիմեան, բնիկ Նիկոմիդացի՝ Արմաշու վանուց ժառանգաւորներէն և ի վերջոյ Շահնազար-Նուպար ժառանգաւորաց վարժարանի առաջին շրջանի աշակերտներէն,

որ ի Սուրբ Օծութեան կոչեցաւ Ստեփան վարդապետ :

2. - Տիրան սարկաւազ Շիշէճեան, բնիկ Պօլսեցի Մայր վարժարանի աշակերտներէն, որ ի Սուրբ Օծութեան կոչեցաւ Իզնատիոս վարդապետ :

3. - Կարապետ սարկաւազ Տ. Մինասեան՝ բնիկ Նիկոմիդայ Պարտիզակ գիւղացի, Ս. Երուսաղէմի ժառանգաւորաց աշակերտներէն, որ ի Սուրբ Օծութեան կոչեցաւ Վահան վարդապետ :

4. - Կորիւն սարկաւազ Խանճեան, բնիկ Պօլսեցի՝ Գում-Գափուի դրսի Պէղճեան վարժարանի նախկին աշակերտներէն, որ ի Սուրբ Օծութեան կոչեցաւ Կորիւն վարդապետ .

5. - Դպիր Յովհաննէս Գրիգորեան, բնիկ Ռուսձուխցի, անդ ուսեալ, որ ի Սուրբ Օծութեան կոչեցաւ Յովհաննէս վարդապետ :

Մայր Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ վրայ ինը քահանայ :

Իւսկիւտարի Սուրբ Խաչ եկեղեցւոյ վրայ երկու քահանայ :

Իստէնեայի Սուրբ Կարապետ, Գանտիլիի Սուրբ Առաքելոց, Քաղկեդոնի Սուրբ Թագաւոր, Միջագիւղի Սուրբ Աստուածածին, Ղալաթիոյ Սուրբ Լուսաւորիչ, Պէյքօղի Սուրբ Նիկողայոս և Էյուպի Սուրբ Եղիա եկեղեցեաց վրայ մէկ մէկ քահանայ :

Մանճըլըխի Կեմերիկ, Բաբերդի Թումշայ, Բաղիշոյ Պաշուածք, Ռոտոսթոյի Սիրիլի, Ռուսձուքի Պապատաղ, Բաղիշոյ Գոմս, Զմիւռնիոյ Քրքաղաճ և Խարբերդի Մեզրէ գիւղօրէից սուրբ եկեղեցեաց վրայ մէկ մէկ քահանայ :

Զարսանճաքի վիճակին ինն գիւղօրէից Ս. Եկեղեցեաց վրայ երեք քահանայ :

Եւ Պօլու, Պանտրմայ, Բաբերդ և Մօլտավալաքիոյ Իսմայիլ քաղաքաց սուրբ եկեղեցեաց վրայ մէկ մէկ քահանայ :

Հետեւեալ չորս վարդապետք կոչեցան ի ծայրագոյն աստիճան մեծի վարդապետութեան, որք են.

1. Արժ. Տ. Մատթէոս վարդապետ Իզմիրլեանց.

2. Արժ. Տ. Հմայեակ վարդապետ Դիմաքսեան.

3. Արժ. Տ. Կարապետ վարդապետ Բագրատունի.

4. Արժ. Տ. Ղեւոնդ վարդապետ Փիրղալէմեան:

Տ. Ղեւոնդ վարդապետի դաւազանի մասնաւոր իշխանութիւնն ալ տրուեցաւ:

Դ.

Կրօնական ժողովս Պալըքէսէրի վիճակին նորընտիր Առաջնորդ Իզմիրլեան Տ. Մատթէոս ծայրագոյն վարդապետի՝ Եկեղեցւոյն և Ազգային պաշտօններով՝ Եկեղեցւոյ և Ազգին մատուցած անձնուէր ծառայութեանց ի վարձատրութիւն որոշեց Եպիսկոպոսական վկայական տալ իրեն, որոյ վարքն ու արժանիքն իսկ կը պահանջէին:

Ե.

ՔՆՆԱԿԱՆ ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԱՐԺ. Տ. ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱՅԻ Տ. ՍԱՐԳՍԵԱՆ

Կրօնական ժողովս յատուկ մասնաժողովոյ մը ձեռօք՝ Արժ. Տ. Սահակ քահանայի աշխատասիրած սոյն Կրօնագիտութիւնը քննեց և ամենայնիւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյս դաւանութեան և աւանդութեանց ու անստերիւր վարդապետութեան համաձայն գտնելով վաւերացոյց զայն և հրամայեց ի տպագրութիւն յուսումն ու խտի մանկանց Սրբոյ Եկեղեցւոյս:

Զ.

ԱՐԺ. Տ. ԱՆՏՈՆ ՎԱՐԳԱՊԵՏ ԹԱՐԳՄԱՆԵԱՆ

Վիէննայի Մխիթարեան վանուց միաբաններէն Արժ. Տ. Անտոն վարդապետ Թարգմանեան խնդրագրով մը ժողովոյս ներկայացաւ, և Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյս ուղղափառ դաւանութիւնը ընդունած ըլլալը յայտնեց, և յատուկ խոստմնագրով մ'ալ ինքզինք Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռոյ ամենայն Հայոց Հայրապետութեան՝ որով և Կոստանդնուպօլսոյ Պատրիարքութեան իրաւասութեան ներքեւ դնելով՝ կը խնդրէր որ ի շարս կուսակրօն Եկեղեցական դասուն ընդունուի ի ծոց Սուրբ Եկեղեցւոյս Հայաստանեայց:

Կրօնական ժողովս Արժ. Տ. Անտոն վարդապետի օրինաւորապէս ձեռնադրեալ ըլլալուն վկայականը և Վիէննայի վանքէն միաբանութեան և Վանահօր հաճութեամբ մեկնած ըլլալուն իւր ձեռքը ունեցած Վանահօր յանձնարարականը տեսնելէ և այս մասին հարկ եղած քննութիւնները կատարելէ ետքը ընդունեց զինքը ի ծոց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյս, որ վարդապետական պաշտօն կը վարէ այժմ:

Է.

Պ. ՍՐԱՊԻՈՆ ԹԸՂԼԵԱՆ

Պ. Սրապիոն Թըղլեան՝ խնդրագրով մը և Գեր. Նարպէյ Խորէն Եպիսկոպոսի յանձնարարականաւր ժողովոյս ներկայացաւ, և ի ծոց Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյս դիմելու անձուկ փափաքն յայտնելով կը խնդրէր որ ընդունուի:

Ժողովս ընդունեց սոյն խնդիրը և խոստովանահայր կարգեց Պ. Սրապիոն Թըղլեանի Արժ. Տ. Խորէն քահանայ Փէշլիվանեան, և նորա անունը ազգային տուժմարին մէջ արձանագրել տուաւ ի ձեռն Գեր. Պատրիարքական փոխանորդի:

Ը.

ԱՐԺ. Տ. ԱՄԲԵՐՈՍԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԻՍԿԷՆՏԵՐԵԱՆ

Արժ. Տ. Ամբերոսիոս վարդապետ իր Պօղոս եղբորմէն ամբաստանուեցաւ յատենի Կրօնական ժողովոյս : Ժողովս խառն Մասնաժողովի մը յանձնեց խնդիրը ի քննութիւն : Բայց Պօղոս յատենի Կրօնական ժողովոյ դատուիլ պնդելով, ժողովս ինք ձեռնարկեց քննութեան. և մինչդեռ քննութիւնը վերջանալու վրայ էր, Պօղոս ոստիկանութեան կը դիմէ, և Տ. Ամբերոսիոս վարդապետ՝ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր մէկ գրովը ոստիկանութեան դուռը կը հրաւիրուի իր եղբօր՝ Պօղոսին հետ դատուելու համար :

Այս տնօրէնութիւնը առանց Կրօնական ժողովոյս գիտութեան կատարուած է :

Թ.

Տ. ՂԱԶԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԵՍՍՐԱՅԻ

Կրօնական ժողովս նկատելով որ Տ. Ղազար վարդապետ ծերացած և զառամեալ ըլլալով, այլ եւս որ և է ազգային պաշտօն վարելու անկարող է, և տեսնելով որ իւր Թափառաշրջիկ կեանքովն հասարակաց իրաւացի տրտնջանաց տեղի կուտայ՝ որոշեց որ ազգային պաշտօներէ մըջ տընջինապէս դադարեալ՝ իր կենաց մնացորդը Աղթամարայ վանքն անցունէ :

Ժ.

ԱՐԺ. Տ. ՊՕՂՍՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԵԼԻՔԵԱՆ ՎԱՆԵՑԻ

Արժ. Տ. Պօղոս վարդապետի խնդրոյն վրայ մանրամասն կը խօսի նախորդ Քաղաքական ժողովոյ հրաժարագրի Բացատրութեան տետրը. որն որ 72-73 ամի խառն ժողովոյ համարատուութեան տեղեկագրնուս մէջ ալ յիշուած է. հոս միայն ի տեղեկութիւն արժան կը դատինք զնել Կրօնական ժողովոյս հետեւեալ պաշտօնագիրը, որ 28 Յունիս 1872 թուակա-

նաւ մատուցուած է Ազգային Ժողովոյ գիււանին ի նիստ ԽԷ. 30 Յունիս 1872 :

Վսեմաշուք Ատենապետ Ազգ. Ընդհանուր Ժողովոյ

Գեր. Երեսփոխան Հարք եւ Մեծ. Էֆ.իք

Ազգային վարչութեան Կրօն. ժողովս քանի որ Սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն Երեսփոխանական ժողովոյդ քուէովն ընտրուելով՝ պաշտօնի սկսեց, տարակոյս չկայ որ Սահմանադրութեան տրամադրութեանցը համաձայն պէտք էր վարուիլ իւր պաշտօնավարութեան բովանդակ շրջանին մէջ. եւ որպէս զի օրինաց տրամադրութեանց դէմ մեղանշած չըլլայ՝ չէր կրնար օրէնքին ցուցուցած տրամադրութենէն շեղիլ. այսպէս եւ իւր Նախագահը՝ Ս. Պատրիարքը պարտաւոր է Սահմանադրութեան տրամադրութեանց գործադիրն ու գործադրուելու հսկողն ըլլալ. քանզի Սահմանադրութիւնը նոյն իսկ իր գոյութիւնը պահպանելու մասին պարտեաց ինչ յօդուածներ որ դժած է ժողովոց համար՝ քան զանոնք առաւել բացորոշ կերպիւ տրամադրած է Ամենապատիւ Սրբազան Պատրիարքին համար. յօդ. 8 դ :

Ինչպէս որ նոյն օրէնքը կը տրամադրէ՝ թէ (յօդ. 11դ) Սրբազան Պատրիարքը երբ ժողովներէն մէկը Սահմանադրութեան տրամադրութեան հակառակ վարմանց մէջ տեսնէ՝ առաջին նուագին անկից բացատրութիւն պահանջելէն եւ երկրորդին զանի ի կանոնապահութիւն հրաւիրելէ վերջը, Ազգային Ընդհ. ժողովոյ կը դիմէ հանդերձ իւր պատճառաբանութեամբը. նոյնպէս եւ Վարչութեան ժողովներէն մին երբ զՍրբազան Պատրիարքն Սահմանադրութեան տրամադրութեանց հակառակ դրից մէջ տեսնէ, որով իր եւ Սրբազան Պատրիարքին մէջ անհամաձայնութիւն մը պատահի, օրինաց 5 եւ 6 դ յօդուածոց տրամադրութեան ուժով պարտաւոր է Երեսփոխանական պատկառելի ժողովոյդ դիմել իր եւ Սրբազան Պատրիարքի մէջ գոյացած անհամաձայնութիւնը բառնալու համար :

Ազգային Վարչութեան Կրօն. ժողովս անանկ պարագայի մը մէջ կը գտնուի այսօր, որ հակառակ իւր ջանիցը պարտաւորած է Երեսփոխանական ժողովոյդ դիմել, որպէս զի խնդրոյ մը առթիւ իր եւ Սրբազան Պատրիարք Հօր մէջ ծագումն առած անհամաձայնութիւնը պատկառելի ժողովդ իր որոշմամբը բառնայ. անհա-

ւասիկ անհամաձայնութեան տեղի տուող խընդիրը, որ սկզբունքի խնդիր է եւ ոչ անձի, այսինքն թէ՛ Ազգային պաշտօնեայ մը, առաջնորդ մը, պատրիարքական փոխանորդ մը եւն. առանց օրինական քննութեան դատապարտել եւ պաշտօնանկ ընել, զոր ի գործ դրած է Սրբազան Պատրիարքը այս օրերս եւ չընդունիր որ դաւառին մէջ քննութիւն ըլլալով դատապարտուի այն պաշտօնեայն, եթէ հարկ ըլլայ դատապարտել:

Բուն եղելութիւնը. Վանայ Պօղոս վարդապետ յանկարծ պաշտօնէն կը դադրի եւ Գլակայ վանից Փոխ—Վանահայր Արժ. Գարեգին վարդապետ Պատրիարքական փոխանորդ կը կարգուի Վասպուրականի. Կրօն. Ժողովս լրագիրներէն կ'իմանայ զայս հակասահմանադրական տնօրէնութիւն, եւ պահ մը լռելէ վերջ Վանեցի ազգայինք խնդրագրով մը Ժողովոյս մէկ նիստին կը ներկայանան, եւ Սրբազան Պատրիարքի հեռագրով Պօղոս վարդապետի յանկարծ պաշտօնանկ լինելն եւ նորա տեղ ուրիշի մը ընտրուած ըլլալը հաղորդելով կը հարցնեն թէ Առաջնորդի ընտրութեան ատեն Պօղոս վարդապետ ընտրելեաց ցանկին մէջ պիտի դրուի՞ թէ ոչ: Որովհետեւ Պօղոս վարդապետ դատապարտեալ չէր, որովհետեւ Ժողովոյս համար Պօղոս վարդապետ մինչ ցայն կէտ Վասպուրականի պաշտօնեայն էր, ինչպէս եւ մինչեւ ցայսօր այնպէս կը ճանաչէ զՊօղոս վարդապետ. եւ որովհետեւ նորա վրայ Կրօն. Ժողովոյս ամբաստանութիւն մը եկած չէր, բնական էր որ Կրօն. Ժողովս չէր կրնար ըսել թէ՛ Պօղոս վարդապետ Առաջնորդական ընտրելեաց ցանկին մէջ չէ կարելի մտնել. եւ այն ինչ պատրաստուած էր սոյն յայտարարութիւնն ընել. ահա նոյն միջոցին եօթ—ութ Վանեցի ազգայնոց ստորագրութեամբ Պօղոս վարդապետի նկատմամբ ամբաստանագիր մ'ալ մատուցաւ, ուստի եւ փութաց Կրօն. Ժողովս երկու կողման միանգամայն պատասխանել թէ յառաջիկայ նիստին ներկայանան պատասխանն ընդունելու:

Կրօնական Ժողովս յաջորդ նիստին մէջ Պօղոս վարդապետի նկատմամբ մատուցեալ ամբաստանագիրն ի նկատի առնլով տեսաւ որ անոնց քննութիւնն կատարեալ եւ օրինաւոր ըլլալու համար՝ Վանայ մէջ պէտք է կատարուի վասն զի Պօղոս վարդապետի համար եղած ամբաստանութիւններն տեղւոյն հետ անմիջական

յարաբերութիւն եւ կապակցութիւն ունին, ուստի եւ Կրօն. Ժողովս մեծամասնութեամբ ըստ օրինի որոշեց որ Պօղոս վարդապետի վրայ եղած ամբաստանութեանց քննութիւնը Վանայ մէջ կատարուի, նոյն իսկ իր կողմանէ կարգեալ քննչաց ձեռօք, սա թէութեամբ որ քննութեան տեղեկագիրը ստորագրեալ զրկուի Կրօն. Ժողովոյս, որ վերջին վճիռը տայ:

Կրօնական Ժողովոյս սոյն որոշումն Ամենապատիւ Սրբազան Պատրիարքն ի սկզբան բնաւ չ'ընդունեց. առարկելով թէ այդ ամբաստանութիւններն ինձ համար երբէք նշանակութեան չ'ունին, շատ է որ ես կ'ըսեմ թէ Պօղոս վարդապետ տգէտ է եւ բռնաւոր եւ Ժողովը պէտք է իմ այս վկայութիւնն ընդունի. երբէք չեմ ընդունիր որ Պօղոս վարդապետ ընտրելեաց ցանկին մէջ դրուի եւ անկարելի է այդմ լինել առ որ երբ պատասխանեց Կրօն. Ժողովս թէ որ եւ իցէ ամբաստանեալ 'ը՝ առանց օրինական քննութեան դատապարտելն մեծ անիրաւութիւն է ամէն պաշտօնական ատենի համար, մանաւանդ այն ատեաններուն համար, որք օրինական կառավարութեան մը ատեաններն են, ինչպէս է Կրօն. Ժողովոյս ատեանը. Նորին Սրբազանութիւնը առաջարկեց որ Պօղոս վարդապետ Պօլիս բերուելով նորա վրայ եղած ամբաստանութիւնները քննուի եւ քննութիւնը լուսաբանելու պարագաները ձեռք բերելու համար Վանայ մէջ Յանձնաժողով մը կազմուի եւ անկից պահանջուին անոնք: Ժողովս Սրբազան Պատրիարք Հօր սոյն առաջարկութիւնը չէր կրնար ընդունել. վասն զի Պօղոս վարդապետի նկատմամբ Ժողովոյս մատուցեալ ամբաստանութիւնները Վասպուրական գաւառէն դուրս քննուելով անկարելի է ճշմարիտ եւ արդար արդիւնք մը ձեռք բերել, զի եղած բոլոր ամբաստանութիւնքն ինչպէս ըսինք, խիստ կապակցութիւն ունին Վասպուրական գաւառի թէ քաղաքին եւ թէ գիւղօրէից հետ. եւ եթէ այսպէս ալ չ'ըլլայ քանի որ իրողութիւններն հոն կատարուած են, քննութիւնն օրինաւոր ըլլալու համար հոն պէտք է կատարուի, զոր Սրբազան Պատրիարքը իսպառ չ'ընդունեց, որով հակառակ մեր ջանից Նորին Սրբազանութեան եւ Կրօն. Ժողովոյս մէջ սոյն անհամաձայնութիւնը տեղի գտաւ:

Արդ՝ Ազգային Կրօն. Ժողովս խնդիրն ամփոփելով, որ մի՛ գուցէ Պօղոս վարդապետի

անձին հետ շփոթի, Երեսփոխանական պատկառելի ժողովոյդ կը ներկայացնէ, որ է՝

Ա. Կրօնական ժողովս օրինաց տրամադրութեան ուժով բնաւ չկրնար ընդունիլ որ առանց օրինական քննութեան որ եւ է Ազգային պաշտօնեայ կամ ամբաստանեալ անձ դատապարտուի եւ պաշտօնանկ ըլլայ, որ դորձադրուած է այս օրերս միայն Սրբազան Պատրիարք Հօր ինքնարար տնօրէնութեամբը:

Բ. Կրօնական ժողովս գաւառական Ազգային պաշտօնէի մը վրայ եղած ամբաստանութեանց քննութիւնը չկրնար ընդունել որ նորա վիճակէնդուրս ըլլայ, մինչեւ որ Երեսփ. ժողովոյդ այս մասին վերջնական որոշումը չ'ընդունի, որոյ ընդհակառակն ըլլալ կը պնդէ Ամենապատիւ Սրբազան Պատրիարքը:

Ահա այս երկու կէտերն են, որ այսօր անհամաձայնութեան մէջ դրած են Կրօն. ժողովս եւ զՍրբազան Պատրիարքը. որուն լուծմանն համար Ընդհանուր ժողովոյդ պատկառելի ատենին կը դիմէ Կրօն. ժողովս, որպէս զի իւր ջանից հակառակ ծագումն առած սոյն անհամաձայնութիւնը բարձուելով՝ փափաքելի խաղաղութիւնը ձեռք բերուի, որոյ ընդհուպ թագաւորելուն անձկանօք սրտի ակնդէտ կ'սպասէ Կրօնական ժողովս:

28 Յունիս 1872

'ի Պատրիարքարանի Հայոց

Կ. Պօլիս

( Սարգսիւս-Քիւնտ )

ԱՏԵՆԱԴՊԻՐ

ԱՏԵՆԱՊԵՏ

Մ. Վ. Իշխանեան

Թարգման Եպիսկոպոս

Գրէգոր Եպիսկոպոս

Նիկողայոս Եպիսկոպոս

Խորէն Վ. Միսիկեան

Հայեան Վ. Այաշեան

Յ. Ք. Սերբեան

Ս. Ք. Տ. Սարգսեան

ԺԱ.

ԳԵՐ. Տ. ՄԿՐՏԻՉ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԻԳՐԱՆԵԱՆ

Կրօնական ժողովս Մշոյ և Տիգրանակերտի վիճակաց Առաջնորդական Տեղապահաց՝ Տիգրանեան Գեր. Մկրտիչ Եպիսկոպոսի կատարած ձեռնադրութեան նըկատմամբ ժողովոյս մատուցած գանգա-

տագրոց վրայ հարկ եղածը որոշեց գրել առ Վեհափառ Հայրապետն ամենայն Հայոց ի պարտուպատշաճ տնօրինութիւն:

ԺԲ.

Կրօնական ժողովս եօթը եկեղեցական պաշտօնեայք իրենց այլ և այլ մասնաւոր թերութեանց համար ժամանակաւոր պատժոյ ենթարկեց, իսկ երբեմն Քասալար անուամբ քահանայ Մայր Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ, որ յառաջ քան զընտրութիւն ժողովոյս՝ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր տնօրէնութեամբ ի քահանայութենէ լուծեալ և ի Սուրբ Երուսաղէմ աքսորեալ էր, խոյս տալով անտի մայրաքաղաքս կը ժամանէ, որոյ որդւոց բողոքագրոյն վրայ Կրօնական ժողովս վերաքննութիւնը կատարեց և նախկին որոշումը վերահաստատելով լուծեալ ճանչցաւ զայն ի քահանայութենէ:

ԺԳ.

ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱԶԼԸՄԵԱՆ

Կրօնական ժողովս սոյն վարդապետին նկատմամբ վերջնական տնօրէնութիւն մ'ընելու համար յատուկ Մասնաժողովոյ մը ձեռօք քննելով նորա նկատմամբ մինչ ցարդ յԱզգային Պատրիարքարան հասած թէ ինպատու և թէ աննպատու գրութիւնները տեսաւ որ արդարեւ Մալաթիոյ մէջ մեծապէս գայթակղեցուցիչ ընթացք մ'ունեցած է, նոյնպէս տեսաւ որ յատենի Սոյ Սրբազան Կաթողիկոսին՝ քննութեան ենթարկուած ատեն ինքնին ի վարդապետութենէ հրաժարեր է, և յետոյ Մալաթիա խոյս տալով Պապականութեան դիմեր և Մալաթիոյ ժողովուրդըն ալ առ այն հրաւիրեր է, այլ սակայն նկատելով ժողովս որ Առաքել վարդապետ զղջալով իւր արարմանց վրայ ներողութիւն կը խնդրէ, որոշեց որ ազգային պաշտօններէ իսպառ՝ իսկ քահանայագոր-

ճուրթենէ մինչ ցնոր տնօրէնութիւն դա-  
դարեալ, Սուրբ Երուսաղէմի Ամենապա-  
տիւ Սրբազան Պատրիարք Հօր անմիջական  
հսկողութեան ներքեւ ապաշխարէ. հե-  
տեւապէս և ըստ այսմ որոշման զրկեց  
զայն ի Սուրբ Երուսաղէմ:

**ԺԴ.**

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԿՐԾՆԱԿԱՆ  
ԽՆԴԻՐՔ

Կրօնական ժողովս սոյն խնդիրներէն

զատ, եօթանասուն և երկու ամուսնա-  
կան և երկու հարիւր վաթսուն և երեք  
այլ և այլ կրօնական մասնաւոր խնդրոց  
կարգադրութեան և լուծման զբաղած է,  
որոց հրատարակութիւնը ոչ թէ միայն  
անկարեւոր, այլ և անպատշաճ կը հա-  
մարի:

Ստորագրուել է 25 Նոյեմբեր 1874

ԱՆԴԱՄՔ ԿՐԾՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

|                 |           |               |              |
|-----------------|-----------|---------------|--------------|
| Թաղեռու         | Եպիսկոպոս |               | ԱՏԵՆԱՊԵՏ     |
| Գրիգոր          | «         |               |              |
| Գարեգիկ         | Վարդապետ  | Թարարեան      |              |
| Հմայեակ         | «         | Դիմաքսեան     |              |
| Մատթէոս         | «         | Իզմիրլեանց    | ԱՏԵՆԱԴՊԻՐ    |
| Գէորգ           | Քահանայ   | Արծրոշնի      |              |
| Խաչատրոշր       | «         | Տ. Գաբրիէլեան |              |
| Խորէն           | «         | Փեհլիվանեան   | Բ. ԱՏԵՆԱԴՊԻՐ |
| Յարոշրիշն       | «         | Սերովբեան     |              |
| Պ. Փ. Յովհաննէս | «         | Մկրեան        |              |
| Տ. Սահակ        | «         | Տ. Սարգսեան   |              |



